

**ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1916 թ. ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ**

Թուրքիայի երիտթուրքական կառավարության 1915 թ. իրագործած XX դարի առաջին ցեղասպանության հետևանքով զոհվեցին ավելի քան մեկ և կես միլիոն հայեր, բռնի մահմեդականացվեց 300-500 հազար հայ, այդքան էլ փախստական դարձան, զրկվեցին իրենց հայրենիքից, բռնագավթվեց պատմական Հայաստանը: Հայությունը սփռվեց աշխարհով մեկ. առաջացավ հայկական սփյուռքը: Գաղթական-փախստականների մեծ հատվածներ սկզբում հանգրվանեցին Արևելյան Հայաստանում, ապա տնտեսական ծանր կացության պատճառով շարունակեցին արտագաղթը դեպի Ռուսական կայսրության հյուսիսային նահանգներ: Ռուսաստանի հայաբնակ վայրերում ստեղծվեցին փախստականներին նպաստող հայկական և ռուսական կազմակերպություններ: 1915 թ. Էջմիածնում հրավիրված գաղթականական համագումարը որոշակի գործ կատարեց փախստականների խնդիրները լուծելու ուղղությամբ, սակայն տարաբնույթ բազմաթիվ հարցեր դեռևս սպասում էին իրենց լուծմանը: Այդ պատճառով Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի հայկական կոմիտեները 1915 թ. աշնանը ծրագրում են հրավիրել նոր համագումար, այս անգամ ոչ թե Էջմիածնում, այլ Սանկտ Պետերբուրգում: Համագումարի հրավիրման թույլտվության նպատակով Պետական դումայի անդամ Միքայել Պապաջանյանը, որ Պետերբուրգի կազմկոմիտեի անդամ էր, մի քանի անգամ գրություններ է հղում Սանկտ Պետերբուրգի քաղաքապետի գրասենյակ (Բ. 569, Տո. 13, Պ. 1612, ս. 16) “Съезд представителей армянских легализованных обществ, местных армянских комитетов и состоящих в ведении католикоса всех армян “Братской помощи”, оказывающих помощь армянам-беженцам” կազմակերպությունների կողմից: Գրությունները կրում են 1916 թ. մարտի 9-ից սկսած ամսաթվերը: Հեղինակը իր թույլտվության խնդրագրում նշում է Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի գաղթականական համագումարի կազմկոմիտեի անդամների թիվը:

Կազմկոմիտեի պետերբուրգաբնակ անդամները.

1. Գրիգոր Թադևոսի Տիգրանով
2. Ալեքսանդր Բոգդանի Ասրիբեկով
3. Ստեփան Գրիգորի Մամիկոնյան
4. Նիկողայոս Ադոնց
5. Նիկողայոս Բերբերով
6. Աբրահամ Ղուկասով
7. Մենտոր Ռոստոմյան
8. Առաքել Մարուխանյան

Գրության հեղինակը ևս այս շարքում է:

Կազմկոմիտեի մոսկվաբնակ անդամները.

1. Ամիրով Իվան
2. Բալին Իվան
3. Ջիվեկեզով Ալեքսեյ
4. Քարամյան Նիկոլայ
5. Աճեմով Քրիստափոր
6. Թադևոսյան Հովսեփ

Քաղաքապետի գրասենյակը սկզբում թույլ է տալիս համագումարը հրավիրել մարտի 26-ից 28-ը: Սակայն օրերն անընդհատ փոփոխվում են, և, ի վերջո, մայիսի 10-ից 12-ը թույլատրվում է հրավիրել համագումարը:

Մարտից մայիսն ընկած ժամանակահատվածում քաղաքապետարանը, համագումարի կազմ. կոմիտեի անդամները ծավալում են բազմաբնույթ

գործունեություն: Հայերը կազմակերպական ջանքեր են ներդնում համագումարի գործունեության ոլորտներն ընդլայնելու նպատակով: «Հայկական համագումար» խորագրով («Армянский съезд») Ա. Ջիվելեգովը հոդված է հրատարակում «Армянский вестник» ամսագրում<sup>1</sup>: Հոդվածը լույս է տեսել, ըստ երևույթին, փետրվարին, քանի որ հեղինակը նշում է. «Март не за горами»: Փաստելով, որ համագումարի հրավիրման խոսակցությունները բարձրացվել են դեռևս 1915 թ. հոկտեմբերից, հեղինակը մատնանշում է գաղթականների օգնության ձեռք մեկնել ցանկացող բազմաթիվ կազմակերպությունների անուններ, որոնք պատրաստ են մասնակցել համագումարին և միջոցներ ներդնել գործի համար: Այդ կազմակերպություններից Ջիվելեգովը հայտնում է Տառյանյան կոմիտեի, Հատուկ Խորհրդակցության, Ջուրջանի կոմիտեի, Օգնության կոմիտեի, Ուրուսովի հարավային օգնության կոմիտեի, Թամամշևի կովկասյան ընկերության, Մոսկվայի Կենտրոնական բյուրոյի և ազգային ու տեղական բազմաթիվ կազմակերպությունների անուններ<sup>2</sup>: Մի հոդված էլ Ջիվելեգովը լույս է ընծայում դարձյալ «Армянский вестник»- ում այս անգամ համագումարի ավարտից հետո, մայիսի 22-ին N 17-ում<sup>3</sup>: Այս հոդվածում Ջիվելեգովը գնահատում է՝ համագումարի գործունեությունը՝ մեծ ձեռքբերում համարելով այն հանգամանքը, որ իսպառ բացակայում էին կուսակցական տարաձայնություններն ու երկպառակությունները<sup>4</sup>: Համագումարի բոլոր մասնակիցները համոզված էին, որ աշխատում են համահայկական գործի համար, որին խոչընդոտելը հավասար է ազգուրացության: Համարելով, որ համերաշխությունը կուսակցությունների գործելակերպում միակ աշխատառճը պետք է լինի, հոդվածագիրը հայտարարում է. «Այդ են պահանջում Հայաստանի շահերը»<sup>5</sup>:

Այդ նույն ժամանակահատվածում՝ համագումարից առաջ և հետո, Սանկտ Պետերբուրգի քաղաքապետին մտահոգում էին այլ խնդիրներ. ովքե՞ր են հայկական համագումարի կազմակերպիչները, նրանց մեջ կա՞ն արդյոք հակապետական դիրքորոշում ունեցող անձնավորություններ: Այդ հարցերի պատասխանը գտնելու համար քաղաքապետի ներքին գործերի վարչության պետի գրասենյակը վերջինիս հրամանով գրություն է հղում Պահնորդական բաժանմունքին՝ խնդրելով ոչ ուշ, քան մինչև մայիսի 26-ը պատասխանել իրենց հետաքրքրող հարցերին: Պահնորդական բաժանմունքին ուղարկելով հայկական համագումարի կազմկոմիտեի անդամների ցուցակը՝ պահանջում են մանրամասն ներկայացնել նրանց գործունեության բոլոր ոլորտները, ընդգծել կասկածելի թվացող բոլոր հանգամանքները: Ստորև ներկայացնում ենք այդ փաստաթղթերը, որոնք պահվում են Սանկտ Պետերբուրգի Պպատմության պետական արխիվում:

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Է. Ա.

Պատմական գիտությունների դոկտոր

<sup>1</sup> Армянский вестник, 1916, N 3, с. 3-4.

<sup>2</sup> Նույն տեղում, նաև Киракосян Дж., Алексей Дживелегов и его историко-публицистическое наследие, Е., 2007, с. 137-139.

<sup>3</sup> Армянский вестник, 1916, N 17, с. 1-2.

<sup>4</sup> Սանկտ Պետերբուրգի այդ համագումարի մասին ուշագրավ հոդված է հրատարակել պատմական գիտությունների թեկնածու Ավետիս Հարությունյանը «Պետրոգրադի գաղթականական համագումարը և նրա նշանակությունը» խորագրով: (Տե՛ս Էջմիածին, 2008, N 7, էջ 73-79):

<sup>5</sup> Армянский вестник, 1916, N 17, с. 1-2.

Государственный исторический архив Санкт-Петербурга,  
ф. Канцелярия С. Петербургского градоначальника 569, п. 13, д. 1612, л. 22

М. В. Д.	В охранное отделение
Управление	Канцелярия по приказанию
Петроградского	Градоначальника просит сообщить
Градоначальника	не позднее утра 26 сего не
Канцелярия 6 делопроизводство	производилось ли в Охранном
23 мая 1916 г. <sup>1</sup> 125	Отделении каких-либо дел о лицах, поименованных на обороте сего.

л. 22 об

1. Присяжный поверенный Степан Григоревич Мамиконян
2. Действительный Статский Советник Григорий Фадеевич Тигранов
3. Александр Богданович Асрибеков
4. Николай Георгиевич Адонц
5. Николай Иванович Берберев
6. Абраам Осипович Гукасов
7. Ментор Никитич Ростомян
8. Аракел Затикович Саруханян
9. Инженер технолог Иван Томасович Амиров
10. Присяжный поверенный Христофор Сергеевич Аджемов
11. Купец Иван Феодорович Балиев
12. Литератор Алексей Карпович Дживелегов
13. Доктор философии Николай Ростомович Карамян
14. Преподаватель Иосиф Иванович Тадевосян
15. Член Гос. Думы Михаил Иванович Пападжанов
16. Моисей Сергеевич Аджемов

л. 23 Срочно секретно 27/V

В шестое делопроизводство канцелярии Петроградского Градоначальника.

Из числа шестнадцати лиц, наименованных в возвращаемом запросе <sup>1</sup> 125, по делам Отделения известны:

1. Асрибеков Александр Богданович, присяжный поверенный, который в 1907 и 1909 гг. имел сношения с лицами, принадлежащими к местной организации партии социалистов-революционеров, но какой характер носили эти сношения, не установлено.
2. Дживелегов Алексей Карпович, литератор, по совершенно секретным сведениям начальника Московского Охранного отделения, сообщенным 5 июня 1915 г. за <sup>1</sup> 291835, выезжал из Москвы в Петроград для доклада

частному собранию Фракции Гос. Думы подробностей Московских беспорядков и принимая участие в конференции, происходившей в доме <sup>1</sup> 29, кв. 3, по Тверской улице в помещении бюро членов Думской фракции “Народной Свободы”.

3. Тадевосянц Иосиф Иванович, преподаватель из села Верхней л. 23<sup>06</sup> Акулисы, Эриванской Губернии, значился в розыском циркуляре Департамента Полиции от 29 октября 1910 г. за <sup>1</sup> 126044 (115 ст. 17986) как подлежащий обыску и аресту, с уведомлением о сем Судебного следователя по особо важным делам Новочеркасского Округного суда Лыжина и Начальника Тифлисского Губернского Жандармского Управления на предмет привлечения его к дознанию по 102 ст. Угол. Улож. по делу партии Дашнакцутюна. Означенный розыск за <sup>1</sup> ... циркуляром того же департамента от 16 января 1911 г. в отношении Тадевосянца прекращен, но чем окончено это дело о нем, сведения не имеются.

4. Пападжанов, Михаил Иванович, присяжный поверенный, член Гос. Думы, по Совершенно секретным сведениям отделения в 1915 г. имел письменные отношения с одним из видных деятелей партии “Дашнакцутюн”, относительно принятия мер к освобождению из-под стражи лица, содержавшегося в Орловской тюрьме за содействие в побеге арестанта. Кроме того Пападжанов в июне 1915 г. принимал участие в заседании конференции партии “Народной Свободы” в Петрограде в помещении бюро-членов Думской Фракции, что в доме N 29 по Тверской улице.

(л. 24) 5. Аджемов, Моисей Сергеевич, присяжный поверенный, член Гос. Думы, в 1910 г. получал из Брюсселя издававшуюся за границей газету “Знамя труда”. В ноябре и декабре 1911 г. отделением Петроградской Портовой Таможни было задержано на имя Аджемова письмо, заключавшее в себе газету “Будущее” революционного характера. По совершенно секретным сведениям начальника Донского Областного Жандармского Управления, сообщенным 9 ноября 1915 г. за № 1226, Аджемов являлся видным членом Ростовской – На Дону Конституционно-Демократической партии. 4 февраля 1907 г. на собрании членов означенной партии он защищал программу, стремящуюся, как

выразился Аджемов, “Свергнуть Проклятое Самодержавие” и идущую к достижению конституционного устройства государства. В том же 1906 г. Аджемов производил денежные сборы в пользу партии С. Р.

Об остальных одиннадцати лицах дел по Отделению не производилось и неблагоприятных сведений о них не поступало.

Мая 26 дня 1916 г.

И. д. Делопроизводителя Петроградского Охранного отделения.

(սևրիշրրիւմն)

Помощник Делопроизводителя (սևրիշրրիւմն)